# ՀՐԱՄԱՆ N 44-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«05» ՄԱՐՏԻ 2014 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրության 4.1-րդ կետը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ և նոր օրենսգրքի նախագիծ մշակելու, անհրաժեշտ օրենսդրական փաթեթ նախապատրաստելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Արա ԳԱԲՈՒԶՅԱՆ | Աշխատանքային խմբի ղեկավար, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ) |
| Սերգեյ ԱՌԱՔԵԼՅԱՆ | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ) |
| Տիգրան ՍԻՄՈՆՅԱՆ | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ) |
| Աննա ՄԱՐԳԱՐՅԱՆ | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ) |
| Աննա ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական (համաձայնությամբ) |

2. Աշխատանքային խմբի աշխատանքները կազմակերպել հետևյալ կարգով՝

1) մշակել և մինչև 2014 թվականի ապրիլի 10-ը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի հայեցակարգը.

2) մշակել և մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագիծը.

3) մասնակցել Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի և նախագծի դրույթների վերաբերյալ մասնագիտական և հանրային քննարկումներին.

4) ուսումնասիրել շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) առաջարկությունները Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի և նախագծի վերաբերյալ, քննարկել այդ առաջարկությունները նշված փաստաթղթերում ներառելու նպատակահարմարությունը.

5) Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագիծը Կառավարության կողմից Ազգային ժողով ուղարկելուց հետո մասնակցել Ազգային ժողովում կազմակերպվող քննարկումներին, այդ թվում՝ ներկայացնելով նախագծի դրույթները և դրանց հիմնավորումները.

6) շահագրգիռ մարմիններին և համապատասխան միջազգային կազմակերպություններին անհրաժեշտության դեպքում տրամադրել մասնագիտական բնույթի վերլուծություններ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի և նախագծի դրույթների վերաբերյալ:

**Հ. ԹՈՎՄԱՍԱՆ**